ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ «Երաժշտություն» առարկան Ներառական կրթության համատեքստում

Հետազոտող ուսուցիչներ՝ Մ. Թովմասյան (Կոտայքի մարզի Զովքի Գ. Շահինյանի անվան միջն. դպրոց),

Մ. Պետրոսյան (Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 հիմնական դպրոց),

Ս. Արշակյան (Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց),

Ռ. Գասպարյան (Գ. Չաուշի անվան թիվ 188 հիմնական դպրոց),

Կ. Կուղինյան (Պռոշյանի Պ. Ղևոնդյանի անվան միջն. դպրոց)

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Ներառական կրթություն հասկացությունը, հանրակրթության համատեքստում------4

ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության առանձնահատկությունները----------9

Եզրակացություն----------14

Գրականության ցանկ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի *արդիականությունը* կայանում է նրանում, որ ժամանակակից կրթական համակարգում հաճախ են սկսել երևան գալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ։ Ուստի այս գործընթացը ճիստ և արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է արդյունավետ ու նպատակամետ գործողությունների, ռազմավարական պլանների մշակում, որի արդյունքում կունենաք զգալի փոփոխություն ներառական ուսուցմամբ երեխաների ուսումնառության գործընթացը կազմակերպելու ուղղությամբ։

Մեր ուսումնասիրության *նպատակն* է վերլուծել ներառական ուսուցման կազմակերպման աշխատանքների առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում և բացահայտել ժամանակակից հիմնախնդիրները «Երաժշտություն» առարկայի շրջանակներում։

ԳԼՈՒԽ 1. «ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»

Կրթությունը սոցիալական հարաբերությունների բազմաշերտ և բազմաֆունկցիոնալ ոլորտ է, որն անձի սոցիալականացման բաղկացուցիչ տարրերից է և ուղղորդում է նրան կյանքի գրեթե ողջ ընթացքում:

Կրթության հիմնական ռազմավարական ուղղվածությունն առնչվում է հասարակությունում անձի կայացման գաղափարի՝ որպես ուսումնառության ակնկալվող արդյունքի հետ: Այդ գերագույն նպատակին են ծառայում կրթության ոլորտի բարելավմանն ուղղված բազմաթիվ ծրագրերը, որոնք ժամանակի հրամայականն են և ընթանում են հասարակության զարգացման հետ զուգընթաց: Ներկայումս մեր հասարակությունում դիտվող գլոբալացման բազմաթիվ դրսևորումների և դրանց ուղեկցող սոցիալ-հոգեբանական, մշակութային և այլ զարգացումների ներքո, կրթական բարեփոխումների իրականացումն ու կառավարումը դառնում են առավել արդիական և հրատապ: Կրթության ոլորտի բարելավմանն ուղղված ծրագրերի նախաձեռնումը ենթադրում է համապատասխան հետազոտությունների իրականացում:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է[1]:

Երաժշտության դասավանդումը բոլոր ժամանակներում կարևոր տեղ է զբաղեցրել հայ կրթահամակարգում, իր առանձնահատուկ դերն է ունեցել ազգի դաստիարակության գործում: ‹‹Երաժշտություն›› առարկան, որպես արվեստի դասավանդման միջոց, երեխաներին ներգրավում է երաժշտական հնչյունների ներդաշնակ ‹‹աշխարհը››՝ նրանք երգում են, պարում, երաժշտություն ունկնդրում, հորինում և այդ բոլորից ստանում գեղագիտական հաճույք: Հանրակրթական դպրոցի

[1] ՀՀ Կրթության մասին օրենք, հոդված 4, կետ 2

«Երաժշտություն» առարկայի նպատակն է դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական արժեհամակարգով օժտված մարդ, երաժշտության գիտակ և ակտիվ ունկնդիր, ով կարող է արժևորել ազգային և համամարդկային երաժշտական մշակույթը: Երաժշտությունն օգնում է սերունդներին փոխանցել ազգային ոգին և ծանոթացնում մեր նախնիների հոգևոր կյանքին: Որպեսզի այսօր իրական դառնա մեր ազգի զարթոնքը, հույժ կարևոր է երաժշտությանը, կերպարվեստին, պարարվեստին առաջնություն տալ՝ իրականացնելով գեղագիտական դաստիարակության գործընթացի կարևորագույն խնդիրները:

«Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում ունի իր առանձնահատ-կությունները և հիմնախնդիրները: Երաժշտություն ուսուցման գործընթացն ունի իր յուրահատկությունները՝ կապված մարդկային մտածողության, ընկալման, իմացության, երևակայության և հուզաշխարհի առանձնահատկությունների հետ, որոնց կրթումը, հղկումն ու զարգացումը նպաստում են կյանքի, շրջապատող բարդ իրականության հնարավորին լիարժեք ըմբռնմանը, ինչը հարստացնում, իմաստավորում, նպատակասլաց է դարձնում մարդու կյանքը: Երաժշտական դաստիարակությունը սերտ կապի մեջ է գիտատեխնիկական ու սոցիալական առաջընթացի, կրթության ու ուսուցման նկատմամբ առաջադրվող աճող պահանջների հետ: Բնական է, որ առանց մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամն, առարկայի բովանդակային վերակառուցման, հնարավոր չէ կազմակերպել սովորողների երաժշտական դաստիարակության գործընթացը: Մանկավարժի խնդիրն է՝ երաժշտության դասին ստեղծագործել, նորը հայտնաբերել, ինչը կտանի նյութի կերպարային և արտահայտչականության դյուրին յուրացմանը: Երբեմն այդպիսի մի քանի խնդիրների լուծումը համատեղված է, երբեմն էլ մեկի լուծումը՝ մյուսին մղում է հետին պլան: Երաժշտարվեստի բովանդակային կամ հաղորդակցման մեկի մղումն առաջին պլան՝ կապված է նրա իրագործման պայմաններից և արտահայտում է հեղինակի մտահղացումները, դրանց իրագործման նպատակները: Երաժշտական ստեղծագործության հաղորդակցման ֆունկցիան միավորում է երկի ներքին կազմակերպումը, ընկալման հոգեբանական մեխանիզմները և երաժշտության սոցիալական կեցության առանձին հատկությունները: Երաժշտությունը հաղորդակցման միջոց է: Որպեսզի այն ունենա

հաղորդակցական ֆունկցիա, երաժշտական երկի կառուցվածքը պետք է ներառի իր մեջ գեղագիտական հաղորդակցման բոլոր կողմերը, պայմանները, ուղղվածությունը, նպատակները, ընկալման օրինաչափությունները և հատկությունները: Երաժշտական ստեղծագործության բովանդակության մեջ գլխավոր դեր ունեն գեղարվեստական հույզերը՝ առաջացած որոշակի օբյեկտիվ պատճառներով (ուրախություն, թախիծ, աշխուժություն, քնքշություն, վճռականություն, տագնապ և այլն): Երաժշտությանն առավել բնորոշ են տրամադրությունների ստեղծումն ու պատկերումը:

Երգի և խոսքի ուսուցման ընթացքում իր ուրույն ու կարևոր տեղն ունի լսողությունը: Լսողությունը խոսքի և երգի գլխավոր կարգավորիչն է: Երգչային լսողության ֆիզիոլոգիական կողմը կախված է մարդու մի շարք զգայական օրգանների համագործակցություններից: Այդ օրգաններն են՝ լսողությունը, տեսողությունը, նյարդային համակարգը, մկանային զգացողությունը, վիբրացիայի զգացողությունը և մարդու էներգիան: Բայց երբ խոսք է գնում վոկալ տվյալների մասին, ապա առաջին հերթին մտաբերում ենք մարդկային լսողությունը: Սակայն, մարդը կարող է ունենալ շատ լավ երաժշտական լսողություն, բայց չունենա երգչական լսողություն: Երգարվեստով զբաղվելու առաջին և կարևորագույն պայմանը երգչական լսողություն ունենալն է: Հետաքրքիր է այն, որ գիտությանը գրեթե ոչինչ հայտնի չէ երգի համար շատ կարևոր ընդունակության՝ երգչական լսողության մասին: Գոյություն ունեն տարբեր տեսաբանների և հայտնի երգիչների կարծիքներ, որոնք հիմնված են անձնական զգացողությունների վրա ու երբեմն իրարամերժ: Հետևաբար, գալիս ենք այն եզրակացության, որ երգչական լսողությունը իրականում կազմակերպվում է երգեցողության ընթացքում առաջացած երգչի ինքնազգացողություններից: Բերենք շատ հետաքրքրաշարժ մի օրինակ: Բոլոր ժամանակների մեծագույն տենորը, անկրկնելի Էնրիկե Կառուզոն երբեք չի զբաղվել դասավանդման արվեստով: Սակայն, մեկ անգամ նրան ուսանել է ձայնական շատ լավ տվյալներ ունեցող մի երիտասարդ տենոր և այդ համագործակցությունը շատ վատ վախճան է ունեցել: Ինչով բացատրել այն փաստը, որ աշխարհահռչակ Կառուզոն, որին ողջ աշխարհն էր ծափահարում, չկարողացավ գոնե միջակ վոկալի դասատու դառնալ: Հարցի պատասխանը տալիս է հենց ինքը լեգենդար Կառուզոն, ասելով, որ յուրաքանչյուր երգիչ ունի իր տեսակետը, ինքնազգացողությունը և մեթոդը: Հետևաբար, գոյություն ունեն այնքան մեթոդներ,

ինչքան որ երգիչներ կան և ցանկացած մեթոդ, որն որ օգտակար և ընդունելի է տվյալ երգչի համար, կարող է ոչ պիտանի լինել մյուսների համար։ Դարեր շարունակ, մարդը պարզապես տեղյակ չի եղել խոսքի և երգեցողության ընթացքում կատարվող ներքին ֆիզիոլոգիական երևույթներից։ Ռուս մեծ ֆիզիոլոգ Խ. Մ. Սեչենովը եկավ այն եզրակացության, որ խոսքը և երգեղոցությունը դա ռեֆլեքս է և այս տեսակետը հետագայում զարգացրեց մեկ այլ ռուս մեծ գիտնական Պավլովը։ Նրանց կողմից հաստատվեց, որ մարդկային խոսքի ֆիզիոլոգիական զարգացման հիմքում ընկած են պայմանական ռեֆլեքսները, որոնք ձևավորվում են մարդու գլխուղեղում։ Անկասկած հարուցիչներ են հանդիսանում արտաքին աշխարհի առարկայական ազդեցություններն ու տպավորությունները, ինչպես նաև, լսողական, տեսողական, մկանային և այլ հարուցիչներ, որոնք առաջանում են խոսակցության ընթացքում։ Միայն մարդուն է հատուկ արտաքին աշխարհից ստացած տպավորությունները արտահայտել խոսքի միջոցով։ Երաժշտությունն արտացոլում է նաև անհատի ինտելեկտուալ-մտավոր և կամային հատկանիշները (խոհականություն և հերոսականություն, պոռթկում և զսպվածու-թյուն, համառություն և այլն)։ Սա հնարավորություն է տալիս ոչ միայն բացահայտել մարդկու հոգեվիճակը, այլև բնավորությունը։ Երաժշտության ազդեցությունը մարդու վրա խորն է և հագեցած ներքին մեծ ուժով։ Երաժշտությունը ոչ թե անտարբերու-թյամբ ‹‹տեղեկացնում է›› ունկնդրին աշխարհի, արվեստագետի մտքերի, զգացում-ների նպատակների մասին, այլ համակում է նրան այդ բովանդակությամբ։ Այն անընդհատ շարժում է ունկնդրի հետաքրքրությունը, նրան տանում իր հետևից, խթանում ընկալման և մտածողության ակտիվությունը։ Արդի սոցիալական, հոգեբանամանկավարժական հետազոտությունները փաստում են, որ ներկայումս բազմաթիվ կենսագենետիկ, սոցիոգենետիկ և հոգեգենետիկ գործողությունների ազդեցության հետևանքով ավելի են շատացել զարգացման ու վարքի շեղումներով երեխաները։ Պետք է հասկանալ, որ յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ հաշվի առնելով նրա անհատական ընդունակությունները, կարողությունները և կրթական պահանջները։ Մեր հանրապետությունում ներառական կրթություն եզրույթը բարձրաձայնվեց 2000 թվականից, քանի որ հենց այս թվականին վերջինս դարձավ կրթական բարեփոխումների մասը ՀՀ Կառավարության

առաջնահերթ խնդիրներից մեկը: Ներառական կրթության մասին օրենքը պաշտոնապես ընդունվեց 2005թ. և միայն 7 տարի անց ՀՀ Ազգային ժողովը հաստատեց հանրակրթության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը, համաձայն որի՝ ներառական կրթության մասին օրենքը դառնալու է հանրակրթության մասին օրենքի մի մասը՝ ըստ այդմ հանրակրթական համակարգը նախապատրաստվելով համընդհանուր ներառականության, որը պայմանավորված է կյանքի կոչել մինչև 2022թ.: Բնականաբար սա նոր ձևաչափ և կարգավիճակ է առաջադրում բոլոր ուսումնական հաստատություններին և մանկավարժական անձնակազմին: Ուսուցման ընդհանուր գործընթացում բնականոն զարգացմամբ երեխաները շփվելով հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ՝ ձևավորում են հանդուրժողականություն, էմպատիա նրանց նկատմամբ, ձգտում օգնել, իսկ հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ պակասում է ագրեսիվության և անհանդուրժողականության ռիսկը: Համատեղ ուսուցման իրականացման փորձը վկայում է, որ այդ բարդ գործընթացը պահանջում է դպրոցի կենսաձևի վերակառուցում: Այսօր կրթօջախի և արտաքին աշխարհի ազդեցությունն ավելի անմիջական է, ինչը վկայում է, որ հնարավոր չէ արդյունավետ իրականացնել աճող սերնդի կրթության և դաստիարակության գործընթացը՝ առանց հաշվի առնելու, թե ինչպես է փոխվում արտաքին աշխարհը և փոփոխության ինչպիսի միտումներ գոյություն ունեն: Դեռևս նախադպրոցական տարիքում երեխաներին հասանելի են գեղարվեստական գործունեության գրեթե բոլոր ձևերը՝ երգ, նկարչություն, ծեփակերտումը: Նշված տարիքում զարգանում են գեղարվեստական ստեղծագործական ունակությունները: Երեխաները հաճույքով նկարում, երգում և ծեփակերտում են: Նկատելի է այն փաստը, որ նրանք սիրում են գեղարվեստական գործունեությունը այն դեպքում, երբ դա իրենց մոտ ստացվում է: Երեխաների ներգրավումը մի շարք գեղարվեստական ստեղծագործական, կերպարվեստային գործողությունների մեջ կարող է զարգացնել երեխայի զգայական ոլորտը, ապահովել երեխաների առավել խոր ընկալումները, երեխաներին հասցնել արվեստը հասկանալու և գնահատելու մակարդակին, երեխաներին սովորեցնել գնահատել մեզ շրջապատող աշխարհի ողջ գեղեցկությունը: Կարևոր է դաստիարակել, զարգացնել այնպիսի հատկանիշներ, այնպիսի կարողություններ, որոնք անհատին

հնարավորություն կտան որևէ գործունեության շրջանակներում հասնել ոչ միայն հաջողության, այլ նաև դառնալ գեղագիտական արժեքների կրող, ստեղծող, արարող ու փոխանցող: Տարբեր ստեղծագործական խնդիրներն ու վարժություններն օգնում են երեխային զարգացնել մտածողությունն ու երևակայությունը, կամքն ու հաստատակամությունը, կազմակերպվածությունը և կարգապահությունը: Վաղ տարիքից երեխաների համար խաղի պես հեշտ ընկալելի է, ցանկալի ու ինքնաբուխ կերպով ծնվող երաժշտությունը: Գաղտնիք չէ, որ երաժշտությունը երեխայի ինքնարտահայտման մատչելի և յուրահատուկ միջոցներից մեկն է, երբ երեխան արտահայտում է ինքն իրեն, իր ցանկությունները, երազները, երևակայությունը: Ստեղծագործական գործընթացը թույլ է տալիս երեխային ներհոգեկան իրականությունը մակածել արտաքին իրականության մեջ, դրանով իսկ պարպելով կուտակված էներգիան և վերապրելով սեփական ներհոգեկան բովանդակությունը: Ընդհանրացնելով վերը նշվածը՝ պարզ է դառնում, որ ստեղծագործելը և առհասարակ երաժշտությամբ զբաղվելը երեխաների մոտ շտկողաուսումնադաստիարակչական գործընթացում բազում դրական փոփոխություններ է կատարում:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հատուկ կարիքներով երեխաների կրթությունը երկրի գլխավոր խնդիրներից է: Սա անհրաժեշտ պայման է իրապես ներառական հասարակություն ստեղծելու համար, որտեղ յուրաքանչյուրը կարող է զգալ իր գործողությունների ներգրավվածությունն ու արդիականությունը: Մենք պետք է հնարավորություն տանք յուրաքանչյուր երեխայի, անկախ իր կարիքներից կամ այլ հանգամանքներից, հասնելու իր ողջ ներուժին, նպաստել հասարակությանը և դառնալ նրա լիիրավ անդամ Դեյվիդ Բլանկետ.

Երաժշտությունն արտացոլում է նաև անհատի ինտելեկտուալ-մտավոր և կամային հատկանիշները (խոհականություն և հերոսականություն, պոռթկում և զսպվածու-թյուն, համառություն և այլն)[2]: Սա հնարավորություն է տալիս ոչ միայն բացահայտել մարդկու հոգեվիճակը, այլև բնավորությունը: Երաժշտության ազդեցությունը մարդու վրա խորն է և հագեցած ներքին մեծ ուժով: Երաժշտությունը ոչ թե անտարբերու-թյամբ «տեղեկացնում է» ունկնդրին աշխարհի, արվեստագետի մտքերի, զգացում-ների նպատակների մասին, այլ համակում է նրան այդ բովանդակությամբ: Այն անընդհատ շարժում է ունկնդրի հետաքրքրությունը, նրան տանում իր հետևից, խթանում ընկալման և մտածողության ակտիվությունը: Արամ Սաթյանի վոկալ-խմբերգային ստեղծագործությունները աշակերտները մեծ հետաքրքրությքամբ են ունկնդրում, սովորում, երգում դրանք հարմար են ընկալման համար: Այսպես՝ սկզբում անհրաժեշտ է երեխաներին ծանոթացնել Արամ Սաթյան կոմպոզիտորի հետ, բայց խոսել նրանց կոմպոզիտորական դինաստիայի մասին, առանձնացնելով Աշոտ Սաթյանին, Արամ Սաթունցին, Արամ Սաթյանին, որպեսզի երեխաները չշփոթեն ներկայացնում ենք հետևյալ կերպ: Երեք կոմպոզիտորների նկարները փակցնում ենք գրատախտակին վերոհիշյալ հերթականությամբ, սակայն ոչ նույն հարթության վրա: Աշոտ Սաթյանի և Արամ Սաթունցի նկարները՝ բարձր, իսկ Արամ Սաթյանինը՝ մի քիչ ներքև՝ որպես երկրորդ սերունդ: Ներկայացնում ենք

[2] Д. Кабалевский, Избранные статьи о музыке Москва 1963

բոլորին և նկարի կողքին գրում նրանց ամենահայտնի ստեղծագործությունը, օրինակ՝ Աշոտ Սաթյան «Մարտիկի երգը», Արամ Սաթունց «Նաիրյան երկրի երգերը», Արամ Սաթյան «Հրաժեշտ դպրոցին»: Այնուհետև երեխաներն ունկնդրում են այս բոլոր ստեղծագործությունները հերթականությամբ: Երկու անգամ ունկնդրելուց հետո ուսուցչուհին հերթականությունը խառնում է, աշակերտների առջև խնդիր է դրվում հիշել և՛ ստեղծագործության անունը, և՛ կոմպոզիտորին: Ընդհանուր ծանոթացմանը և խաղին պետք է տրամադրել 20 րոպե, որից հետո իմաստավորման փուլում ընտրել Սաթյանի ստեղծագործություններից մեկը և ուսուցանել՝ ելնելով դասարանի հետաքրքրություններից և կատարողական հմտություններից: Երեխաները փոքր հասակից պետք է ծանոթանան նաև երաժշտական ժանրերին, որոնք ծննդյան օրից նրանց հայտնի են, երգ, պարը, քայլերգը: Կոմպոզիտորը հիմք ընդունելով դրանք երեխային առաջնորդում է երաժշտության կախարդական աշխարհ:

Օրինակ առաջին դասարանում կարելի է ուսուցանել «Հեքիաթների գիրք» երգը, ընդգրկելով «Երաժշտական տնակի բնակիչները» թեմայի շրջանակներում, այնուհետև «Իմ ոզնի» երգը: Այս երկու երգերը սովորելուց հետո երեխաները պետք է բեմադրեն իրենց սովորած երգերը: Ուսուցիչը փորձում է օգնել, որի համար առաջարկվում են հետևյալ հարցադրումները՝

1. Երեխաներ, ո՞րն է այսօրվա մեր դասի թեման: Երեխաները- «Երաժշտական տնակի բնակիչները»:
2. Երաժշտական տնակում, ո՞ր կոմպոզիտորի երգերն են ապրում: Երեխաներ- Արամ Սաթյանի:
3. Եկեք գնանք երգերին այցելության:

Աշակերտները ուսուցչի հետ բացում են տնակի դուռը և տեսնում իրենց ծանոթ կերպարներին՝ «Հեքիաթային գիրք»-ը և «Ոզնին»: Ուսուցիչը վերցնում է երկուսին և դիմում երեխաներին:

-Երեխաներ, ո՞ր երգով պետք է վերցնենք մեր հերոսներին:

Այդժամ երեխաները հիշում են իրենց սովորած երգերը և երգում:

Հատկանշական է, որ նմանօրինակ խաղերը երեխաների մեջ հետաքրքրություն են առաջացնում:

Երկրորդ դասարանում ուսուցանել «Խենթ քամի» երգը: Վերջինս կապելով «Ի՞նչ է երաժշտական խոսքը» թեմայի բովանդակության հետ: Այս թեմայի շրջանակներում երեխաները ունկնդրում են Ռ. Մելիքյանի «Գարուն եկավ» երգը, այնուհետև սովորում երգել: Փորձելով ամբողջացնել թեման խորհուրդ ենք տալիս ուսուցանել նաև «Խենթ քամի» երգը: Որից հետո երեխաները փորձում են ձեռքի շարժումով նկարագրել, պատկերել քամուն: Այնուհետև նույն առաջադրանքը կատարում են ամբողջ դասարանով:

«Նավակ», «Իմ ոզնին», «Ծիծեռնակ» ստեղծագործությունները կարելի է ուսուցանել երաժշտառիթմական շարժումների միջոցով:

Իսկ «Հայաստան», «Հրաժեշտ դպրոցին» խմբերգերը և «Հայրենիք» երգը օգտագործել արտադասարանական միջոցառման շրջանակներում, պար բեմադրելու նպատակով նկ. 1:



Նկ. 1

Երրորդ դասարանում երեխաներն անցնում են «Երգային, պարային, քայլերգային երաժշտությունը» թեման, որի շրջանակներում կարող են ունկնդրել «Տուր ինձ ձեռքդ» քայլերգը: Ծանոթանալով երգի ռիթմին կքայլեն վերջինիս հնչյունների ներքո: Այս երգը կօգնի թեմայի խորը յուրացմանը, բացի այդ Միքայել Հարությունյանի խոսքերը ուսուցողական կլինեն աշակերտների համար:

Չորրորդ դասարանում աշակերտները անցնում են «Իմ ժողովրդի երաժշտությունը» թեման[3], որի շրջանակներում ունկնդրում են Աշոտ Սաթյանի «Արարատյան դաշտի երգերը» շարքից «Խաղաղաքարը», «Մարտիկի երգը» և «Ես իմ անուշ Հայաստանի» երգերը, ծանոթանում են Աշոտ Սաթյանի կյանքին և ստեղծագործությանը: Թեմայի ամբողջականության համար առաջարկում ենք աշակերտներին ներկայացնել Սաթյանների գերդաստանը և Արամ Սաթյանին: Շեշտը դնելով այն փաստի վրա, որ կոմպոզիտորը իրենց ժամանակակիցն է: Կոմպոզիտորին ներկայացնելուց հետո ուսուցիչը աշակերտներին առաջարկում է ունկնդրել «Հայաստան» խմբերգը, որից հետո աշակերտները զույգեր են կազմում և պարում: Բացի պարելը աշակերտները արտաբերում են երգի ռիթմը, որպեսզի հաշիվը ու շարժումները ճիշտ կառավարեն: Այսպիսով, «Հայաստան» խմբերգը երեխաների մեջ կսերմանի սեր դեպի պարը, որը ընթանում է սաթյանական վալսային հնչյունների ներքո: Միաժամանակ երեխաները համախմբվում են և հաճույք ստանում պարելուց:

«Հրաժեշտ դպրոցին» խմբերգը առաջարկում ենք կիրառել 7-րդ դասարանի «Դասական և հանրամատչելի երաժշտություն» թեմայի շրջանակներում: Այսպես. Աշակերտները ունկնդրում են «Հրաժեշտ դպրոցին» խմբերգը, որից հետո ուսուցիչը աշակերտներին առաջարկում է թիմային աշխատանք: Քանի որ աշակերտները հրաժեշտ են տալիս Երաժշտություն առարկային, երգի վերնագիրը դառնում է «Հրաժեշտ Երաժշտություն առարկային» և աշակերտները փոխում են երգի բառերը: Այսպիսով, «Հրաժեշտ Երաժշտության առարկային» խմբերգը նպաստում է թիմային աշխատանքի իրականացմանը, միասին աշխատելու փորձին և կարողությանը: Հաշվի առնելով այն փաստը, որ 7-րդ դասարանում աշակերտներին այնքան էլ չի գրավում երգեցողությունը, այսկերպ նրանք ցանկանում են երգել իրենց «գրած» ստեղծագործությունը, որը լրացվում է պարով: Աշակերտները զույգեր են կազմում և պարում:

Արամ Սաթյանի «Առավոտ» խմբերգն առաջարկում ենք ուսուցանել հինգերորդ դասարանում՝ «Երաժշտությունը և կերպարվեստը» թեմայի, «Երաժշտությամբ «նկարված» պատկերներ» ենթաթեմայի շրջանակներում: Այս թեմայի շրջանակներում

[3] Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում» Ուսուցչի մեթոդական ձեռնարկ Յու. Վ. Յուզբաշյան, Ա. Ա. Փահլևանյան, Վ. Ի. Ավետիսյան

երեխաները ծանոթանում են Էդվարդ Գրիգին և ունկնդրում «Պեր Գյունտ» սյուիտի առաջին մասը՝ «Առավոտ»-ը, այնուհետև Արամ Սաթյանի «Առավոտ» խմբերգը, ըստ այդմ համեմատում են Նորվեգիայի և Հայաստանի առավոտները: Համեմատելուց հետո գրատախտակին տեաձև աղյուսակով գտնում են նմանությունները և տարբերությունները:

Երեխաները դեռ ներարգանդային կյանքում կարողանում են տարբերել ձայները և արձագանքել ձայնին: Նրանք կարողանում են նաև տարբերակել հարազատի, օտարի, ծանոթ-անծանոթի ձայների տեմբրը: Երաժշտության աշխարհի հնչյունները երեխաների մոտ զարգանում են այն ժամանակ, երբ նրանց շրջապատող մարդիկ հատուկ ստեղծում են երաժշտական միջավայր: Ձայնը երաժշտության սկիզբն է:

Վաղ տարիքից երեխաները կարող են լսել տարբեր տեսակի հնչյունների տարբերությունը: Մի քանի շաբաթ անց երեխան կարող է նույնականացնել իր մոր ձայնը այլ մարդկանց ձայնի հետ: Երաժշտության ազդեցությունը բարձրացնում է երեխայի հնչյուններն ու բառերը ապակոդավորելու բնական կարողությունը: Երեխայի համար մանկական ոտանավորներ երգելով՝ դուք կարող եք օգնել նրան բացահայտել ձայնային ձևերը և սովորել կրկնությունների միջոցով: Բացի այդ, երաժշտությունը նաև օգնում է երեխաներին կանխատեսել, թե ինչ է լինելու հաջորդ բանաստեղծության կամ երգի մեջ, և նրանք գիտեն, թե ինչպես դասավորել այս օրինաչափությունները հաջորդականությամբ: Տիրապետելով այս հմտություններին՝ երեխաները հիմք են ստեղծում գրագիտության և թվաբանության համար: Գիտնականները ապացուցել են, որ երգ լսելուց և աշխատանք կամ դասերն կատարելիս երեխաները ավելի արագ կընկալեն և այն ավելի հեշտ կլինի. օրինակ՝ շատ բարդ է սահմանազատել ծանր մետալն ու 1980-ականների ծանր ռոքը: Արվեստների շարքում երաժշտությունը կարող է դասակարգվել որպես կատարողական արվեստ, գեղարվեստ կամ որպես լսարանային արվեստ: Երաժշտությունը կարող է նվագվել, երգվել և լսվել կենդանի կատարմամբ ռոք համերգի կամ նվագախմբային ելույթի ժամանակ, լսվել կենդանի կատարմամբ, որպես դրամատիկ ստեղծագործության մաս (երաժշտական թատրոն կամ օպերային թատրոն), կամ ձայնագրվել և լսվել ռադիոյով, MP3 նվագարկչով, CD նվագարկչով, սմարթֆոնով կամ որպես ֆիլմին կամ հեռուստատեսային շոուին ուղեկցող մաս:

Շատ մշակույթներում երաժշտությունը կարևոր դեր ունի մարդկանց կենցաղում, որովհետև այն առանցքային նշանակություն ունի կրոնական ծեսերում, կյանքի անցումային փուլերի արարողություններում (ուսման ավարտ, ամուսնություն)։ Երաժշտությունն անհրաժեշտ է նաև պարի և մշակութային այլ բնագավառների համար։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, «Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում իր առանձնահատուկ դերն ու կարևորությունը ունի: Այն օգնում է երեխաներին գեղեցիկը զգալու և տարբերակելու: Ինչպես նշեցինք վերևում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքը առավել արդյունավետ է դառնում հենց երաժշտության միջոցով, իսկ երաժշտության ընտրության հարցում իրենց ուրույն դերն ունեն ժամանակակից կոմպոզիտորները: Արամ Սաթյանը հանդիսանում է արդի հայ կոմպոզիտորական դպրոցի այն ներկայացուցիչը, ով ժամանակակից հայ դասական երաժշտությունը ներկայացնում է աշխարհի տարբեր երկրներում և դրանով մեծապես նպաստում հայ երաժշտության, մեր ստեղծագործ ժողովրդի հեղինակությանը և ճանաչմանը, ուստի նրա արվեստը միանգամայն տրամաբանական է ներկայացնել հայոց կրթօջախներում երաժշտության դասին, քանզի սովորողները պետք է ճանաչեն և իմանան արդի հայ երաժշտության ներկայացուցչին, ով ապրում և ստեղծագործում է մեր օրերում:

Հետազոտական և վերլուծական աշխատանքները բերեցին այն համոզմանը, որ ներկայացված ստեղծագործությունները լիովին հնարավորություն են ընձեռում ուսուցողական նպատակով այն կիրառել երաժշտական ու հանրակրթական դպրոցներում, այդ թվում այն դպրոցներում, որոնք ներառված են ներառական կրթության ոլորտը:

Աշխատանքում կատարված առաջարկները համահունչ են հանրակրթական դպրոցների ‹‹Երաժշտություն›› առարկայի ծրագրին և կարող են երաժշտության դասը դարձնել ավելի բազմաբովանդակ, երաժշտության ուսուցչին հնարավորություն տալով կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք ավելի նպատակասլաց և հետևողական կդարձնեն երաժշտության դասը:

Այսպիսով, Արամ Սաթյանի վոկալ-խմբերգային ստեղծագործությունների կիրառումը երաժշտական և հանրակրթական դպրոցներում մեծապես նպաստում է երեխաների երաժշտագեղագիտական դաստիարակությանը, խթանում նրանց երաժշտական ընդունակությունների, լսողության, մտածողության և ընկալման զարգացմանը՝ ձևավորելով համակողմանի զարգացած անհատի, մեր երկրի ապագա քաղաքացուն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու. Երևան 2011թ., «Ա. Սաթյանի Մետա-մորֆոզը՝-ը գալարափողի և լարային նվագախմբի համար»՝ հոդվածագիր Շ. Գրիգորյան:
2. «Ազգ» շաբաթաթերթ , Երևան1997թ., «Սերը և գեղեցիկը պետք է հաղթեն», հոդվածագիր Ի. Շաբոյան
3. «Ժամանակ» շաբաթաթերթ Երևան 2010թ., «Այսօր Ցախեսներ շատ կան», հոդվածագիր Լ. Պետրոսյան
4. «Առավոտ» շաբաթաթերթ Երևան «Մեղեդին աստվածածոր է», Ս. Գյոդակյան
5. «Ավանգարդ՝ շաբաթաթերթ 1987թ., «Երգի ճախրանքով», հոդվածագիր Ն. Ավետիսյան
6. «Երգեր և ռոմանսներ» Երևան 2009 թ., Ա.Սաթյան
7. «Հայ երաժշտության պատմություն» Ա.Բարսամյան, Մ. Հարությունյան1996թ.,
8. . «Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում» Ուսուցչի մեթոդական ձեռնարկ Յու. Վ. Յուզբաշյան, Ա. Ա. Փահլևանյան, Վ. Ի. Ավետիսյան
9. Д. Кабалевский, Избранные статьи о музыке Москва 1963
10. «Երաժշտական բացատրական բառարան» Կ. Ե. Մելիք-Վրթանեսյան, Մ. Ա. Տոնյան Երևան 1989թ.,